4/ա 1903

<<ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐ ՀԱՄԱՐ <<(СИАЗ-3) ՀԱԿԱՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻԿԱ-ՄԱՆՐԱԹԵԼԱՅԻՆ ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, ՏԵՂԱԴՐՈՒՄ, ԿԱՐԳԱԲԵՐՈՒՄ և ՀԱՆՁՆՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ >> ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԱ-ՀՄԱ-ԾՁԲ- 19/03

ք. **Երևան** «29» մայիս 2019 թ.

<<ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Պետրոսյանի, որը գործում է <<ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ** -ն, ի դեմս տնօրեն Հ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **(СИАЗ-3) հակասեյսմիկ պաշտպանական համակարգի օպտիկա-մանրաթելային կապի սարքավորումների ձեռքբերում, տեղադրում, կարգաբերում և հանձնում շահագործման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով սխատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ ԱԱԾ կողմից ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից**

կարևոր օբյեկտներում ծառայություններ մատուցող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 **Ծառայությունները մատուցելուց 40 օր առաջ՝ մուտքի անցագրեր ստանալու նպատակով, Պատվիրատուին ներկայացնել այն աշխատակիցների տվյալները ովքեր ընդգրկված են ծառայության մատուցման գործընթացում: ՀՀ կառավարության 29.04.2004թ. թիվ 1008 որոշմամբ <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ն համարվում է կարևորագույն օբյեկտ, և ընկերության հարակից տարածք մուտք գործելը իրականացվում է հսկիչ-անցագրային կետով:**

2.4.5 **Պահպանել <<ՀԱԷԿ>> ՓԲԸ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:**

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և

պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 10 700 000 (Տասը միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 2 675 000 (երկու միլիոն վեց հարյուր յոթանասուն հինգ հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի

դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ	«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50/12	Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Մովսես Խորենացի 17-24
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
ՀՀ 11500682358300	Հ/հ 163007061746
ՀՎՀՀ 01804548	ՀՎՀՀ 02611406
Տնօրեն՝ Վ. Պետրոսյան	Տնօրեն՝ Հ. Գևորգյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 29 » մայիս 2019 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	98111130	**1) Օպտիկա-մանրաթելային համակարգի տեղակապման աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՊՊՀ-00.00.00 տեղակապման նախագծի՝ սխեմա ՊՊՀ-00.00.00 ԷԿ (նախագիծը տրամադրվում է); 2) Օպտիկա-մանրաթելային համակարգի սարքավորումները պետք է ձեռք բերվեն համաձայն հավելված 2-ում ներկայացված ցանկի և համապատասխանեն նշված տեխնիկական պահանջներին; 3) Օպտիկա-մանրաթելային կապուղու բաշխիչ վահանակի տեղադրում; 4) Բաշխիչ վահանակում օպտիկա-մանրաթելային մալուխների զոդում միակցիչին ըստ նախագծի պայմանների և օպտիկա-մանրաթելային զոդման միջազգային ստանդարտներին; 5) Փոխակերպիչների տեղադրում վահանակներում, կարգաբերում և աշխատունակության ստուգում; 6) СИАЗ-3 տվիչների միացում փոխակերպիչներին; 7) СИАЗ-3 համակարգի տվիչների ներքին ծրագրային ապահովման կարգաբերում օպտիկա-մանրաթելային կապի միջոցով աշխատելու համար; 8) СИАЗ-3 համակարգի արդյունաբերական համակարգչի հատուկ ծրագրային ապահովման կարգաբերում օպտիկա-մանրաթելային կապի միջոցով աշխատելու համար;**	դրամ	10 700 000	1	ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ տարածք	**Մինչև 2019թ օգոստոսի 31-ը**

		9) Ընդհանուր կապուղու թողունակության ստուգում, կարգաբերում և հանձնում շահագործման:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Ատոմային էլեկտրակայանների շահագործման
հայկական գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50/12
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 11500682358300
ՀՎՀՀ 01804548
Տնօրեն՝ Վ. Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Մովսես
Խորենացի 17-24
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/հ 163007061746
ՀՎՀՀ 02611406
Տնօրեն՝ Հ. Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 29 » մայիս 2019 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ ՕԺԱՆԴԱԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

h /h	Սարքավորման անվանում	Ապրանքանիշ	Քանակ
1	Փոխակերպիչ RS485 (արդյունաբերական մեդիափոխարկիչ RS-232/422/485 տեսակի ազդակների փոխարկում բազմամոդային օպտիկա-մանրաթելքային ազդակների (SCտեսակի միացուցիչ) էլեկտրամեկուսացման աստիճանը 2 կՎ, ընդլայնված ջերմային դիապազոն -40...+85 C)	**ICF-1150I-M-SC-T**	**12 հատ**
2	Սնուցման բլոկ 5 Վ, 1 Ա	-	**12 հատ**
3	Միացումների տուփ (Ճակատային մալուխային կազմակերպիչ Բազմաֆունկցիոնալ օպտիկական կոմուտացիոն դարակի համար 19 դյույմ լայնքով, 1U ունակությամբ)	**CK-12 (AFR-00471)**	**1 հատ**
4	Հաղորդակցման լար (Օպտիկա-մանրաթելքային մալուխ համալրված միացուցիչներով /համակցալար/ 2 մետր երկարությամ դուպլեքս MM 50/125 OM3, Duplex SC - Duplex SC Մակերեսային ծածկույթը ցածր ծխարտադրությամբ հալոգենազերց /LSZH/ FO Patch Cord, duplex MM 50/125 OM3, Duplex SC - Duplex SC, LSZH, 2.0m)	**91.99.372.00200**	**24 հատ**
5	Բազմաֆունկցիոնալ հաղորդակցման վահանակի իրան (Բազմաֆունկցիոնալ օպտիկական կոմուտացիոն դարակի լրակազմ. 19 դյույմ լայնքով, 1U ունակությամբ . Շարժական հենակի արկայությամբ, փոփոխնող դիմային հարթակի տեղադրումով,4-20 մմ մալուխային M20 տեսակի մուտքերով, լուսատարների բաշխիչներով,պաշտպանիչ արամիդային տելիկների ֆիքսման հանգույցով, ճակատային նշագրման ժապավենի առկայությամբ: Ամրացման պտուտակների կոմպլեկտ:Արտադրողի կողմից 25 տարվա երաշխիք, համակարգի անխափան աշխատանքի համար: Մոնտաժ: Օպտիկական կոմուտացիոն դարակի դիմային հարթակ 12 հատ Duplex SC օպտիկական համակցիչների տեղադրման տեղով : Արտադրողի կողմից 25 տարվա երաշխիք, համակարգի անխափան աշխատանքի համար: Front Panel 12xDuplex ST/Duplex SC, Graphite)	**RFR-00311** **AFR-00480**	**1 հատ**
6	Օպտիկական դուպլեքսային բազմամոդ ադապտոր(Օպտիկա- մանրաթելքային դուպլեքս բազմամոդային ադապտոր SC MM OM3, պտուտակների ամրացումով, ֆոսֆորային բրոնզ, ակվա գույնի> Adapter Duplex SC MM OM3, Phosphor Bronze, Unshuttered, Flange Mount, Aqua)	**18282-0035**	**24 հատ**
7	Մոնտաժային լար (Օպտիկա-մանրաթելքային մոնտաժման լար /փիգ -թեյլ/ բազմամոդային, սիմպլեքս SC MM OM3, ծածկույթը ցածր ծխարտադրության հալոգեններ չպարունակող նյութից (LSOH) – 2 մետր. Pig-Tail MM 50/125 OM3 Simplex SC, LSZH, 2.0m Օպտիկա-մանրաթելքային զոդումներ պաշտպանող 45 մմ երկարության գիլզաներ 45 mm Splice Protector)	**91.30.332.00200** **KFR-00008**	**48 հատ**

8	Օպտիկա-մանրաթելքային մալուխ (Օպտիկա-մանրաթելքային ընդհանուր կիրարման մալուխ, 4 ջիղ, ազատ բուֆերային ծածկույթ. 50/125 մկմ, բազմամոդային OM3 դասի. Գույնը կանաչ 4 Fibres Universal Cable LSZH, MM 50/125 OM3, Loose Tube)	**CFR-00574**	**2100 մ**
9	Պահարան 6U (Պահարան պատի մոնտաժման հնարավորությամբ մեկ սեկցիոն, 6U 600x346; Վահանակ 19" c DIN-ձողաքանոնով համալրված 3U (133x446x60мм) կափարիչով)	**WZ-0750-S1-09-011** **WZ-PS3U-00-00-011**	**3 հատ**
10	Պահարան 12U (Պահարան պատի մոնտաժման հնարավորությամբ մեկ սեկցիոն, 12U 600x600; Վահանակ 19" c DIN-ձողաքանոնով համալրված 3U)	**WZ-3715-01-03-011** **WZ-PS3U-00-00-011**	**1 հատ**
11	Օպտիկական հաղորդակցման տուփ (Օպտիկա-մանրաթելքային կոմուտացիոն պլաստմասե տուփ 601 տիպի, նախատեսված 4 դուպլեքս ադապտորների տեղադրման համար. ադապտորներով համալրված չէ):	**WFR-00027-02**	**3 հատ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Ատոմային էլեկտրակայանների շահագործման
հայկական գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50/12
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 11500682358300
ՀՎՀՀ 01804548
Տնօրեն՝ Վ. Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Մովսես
Խորենացի 17-24
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/հ 163007061746
ՀՎՀՀ 02611406
Տնօրեն՝ Հ. Գևորգյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 29 » մայիս 2019 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	**98111130**	**(СИАЗ-3) հակասեյսմիկ պաշտպանական համակարգի օպտիկա-մանրաթելային կապի սարքավորումների ձեռքբերում, տեղադրում, կարգաբերում և հանձնում շահագործման**	-	-	-	-	-	-	-	-	10 700 000	10 700 000	10 700 000	10 700 000	10 700 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Ատոմային էլեկտրակայանների շահագործման
հայկական գիտահետազոտական ինստիտուտ>> ՓԲԸ
Հասցեն՝ ՀՀ ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50/12
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 11500682358300
ՀՎՀՀ 01804548
Տնօրեն՝ Վ. Պետրոսյան

/ստորագրություն/
L.S

ԿԱՏԱՐՈՂ

«ՎԱՆ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Մովսես
Խորենացի 17-24
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/h 163007061746
ՀՎՀՀ 02611406
Տնօրեն՝ Հ. Գևորգյան

/ստորագրություն/
L.S

Հավելված 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն